

երը, հովուունի՞դ աներեւոյթ, որ սրբնով Նոր հովուի մէջ կը կանչես հօտն աստեղայ,

Քու հրեշտակի անմեղութիւնդ օդին մէջ Ալրշալոյսով շիկնող ձեան մէջ մարմառանայ,

Պատրաստ գրտիր երկրիս մէջ
Խմ հիացումս և խմ սէր,
ինչպէս արփւոյն ջերմութիւն,
ինչպէս թափիծըդ, Գիշեր:

Դուք արծիւներ, միայնութեան թագաւոր՝
Խոկումներու պէս փառահեղ ու տրիսուր,

Եղջերով նայուածը անմեղ,
Գազաններու րոցէ բիբեր այրին խոր,

Լերան կողէն մարզը փշնտոսղ արջառներ,
Եղջներու բնակիչ ձրկներ մըթասուն,
Դաշտի առուակ, լերան ջրովիժ, ամպի ցող,
Ծովու հառաչ, անապատի լրութիւն,

Բնութեան ջնորհը և այժեր
Պատրաստ գըտէր իմին սէր,
ինչպէս արփւոյն ջերմութիւն
Կամ թաղծութիւնըդ, Գիշեր:

Է. — ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՊԱԳԱՅՑ ՍԵՐՈՒԽՆԵՐՈՒՆ

Այս պահուն՝ ապացանցի պատուհանը բացուցեան երեցաւ Հայոց զշխոյք՝ Խաժիշտներէ շնչապատահ և Առուխը թեթեւորին հակած լճակին վրայ:
Գողթնեցներու ինուրը բաժքներով, փոքրով, ճնծաներով և թմրուկներով՝ հնկեցոց հայրենոսիրական ողջոյն մը՝ հարենիցիք ապազայ սերունդներուն),

Չըքնաղ ափեր որ ձեր գարնան ճոխութիւն
Պիտի նետէց մեծդիր փունջի մը նըման
Ալրարատեան դիւցազներուն՝ երբ գարձած՝
Մօրդդ ձեռքէն պըսակ մ'ուզին յաղթական:

Ո՛՛ լուսնին տակ կամ այգուն՝
Քովէդթըռչիլ տեսնէց արծիւն հայ թագին,
Ե՛րբ ալ առնուց շուքն հայրինի գրօշներուն՝
Կրկնէր փողի արձագանգներ խնդագին,

Երբ մենաւոր պատկեր մ'անցնի երացուն՝
Թիզ հայ լեզուով կրկնել սրտին իր ցեր-
թուած,

Երբ ծառերուդ ճիւկին մէջէն լըճակին՝
Հայ բիրն ուղղէ ժըպիտն ուսկի, մելամաղա-

նաւասարդի մ'երբ արշալոյս միացնէ
Գեղեցկութիւնն և միտք և ոյժ հայրենի,
Երբ Անահատայ զոհի ծովսով միզապատ՝
Պարի ծըփանըն ալեաց երգին նըմանի,

Թող էակներն այն անծանօթ, անանուն,
Որ աշխարհէս առաջ իմ սիրտս ապրեցան,
Որ ժառանգեն պիտ' նոյն հոգի, նոյն լեռ
զուն,

Ու նոյն փառքեր պատմութեան,

Գրտնեն պատրաստ երկրիս մէջ
Խմ հին ողջոյնս, անմահ սէր,
Զերդ կամարներն յաղթական
Գիրի բերուած զրօշակներ,
Ինչպէս այս լիճն և այս լեռ,
Ու ձեր ալեաց մէջ մըրսչող ովկիանն,
Ու երասխայ ջրովէժներ:

Հ. Կ. Տ. Ա. Ս. Ա. Խ.

ԱՆՇԱՐԺ ԶԱՏԻԿ

Ճ Ճ Ճ

«Բազմավէպն» Յունուար ամսի թուի
մէջ համառուսակի ազդ մը տալով ընթեր-
ցողներին Անշարժ Զատիկի մասին եղած
նոր առաջարկութեան, կը խոստանար ու-
րիշ մերձաւոր առթիւ ընդարձակ կերպով
զրադիլ այդ խնդրով: Ալրդ ներկայ յօ-
դուածովս յուսանց պատուական Հանդիսի
փափարն լրացնել:

Հայաստանի մի գիւղում, պատմական
ժամանակներից մնացած, հին կաղապարի
Տէրտէրներից մին, Ս. Զատիկի օրն ան-
շարժ կամ անսխալ տօնելու համար, Մէծի

Պահոց սկիզբէն գրպանը լեցնում է լորիս օրերու հաշիւով. որպէս զի մի մի հատ ամեն օր դուրս ճգելով հասնի ճիշտ լլ. Զատիկը տօնելու: Խսկ քարի իրիցկինն մի օր տեսնում է լորիաներ Ցէրտէրի զըրպանում, կարծելով թէ նա շատ սիրում է ուտել, առանց ինայելու մի լիբը բռւ զիշերը լեցնում է գրպանը: Ցէրտէրն լորիաներն մի մի դուրս ճգելով, տեսնում է որ չի պարպում և աղոփնացն սովորականից աւելի երկարացաւ, զարմացրով հարցնում է իրիցկնան. Խի՞ էս տարի չէ պարպում լորիէն որ զայ Զատիկն: Իրիցկինն անկեղծարար պատմումէ եղածն: Քա՛, հէր օրհնած, չ'ասե՞ն որ էս տարի Զատիկն գալու չէ, ցանի ճէպումն լիբն է լորիան:

Այս պատմութիւնն զուարձացուցեր է մեր նախնիքն և արդ իսկ մեզ կրկին հանոյց և ծիծաղ կը բերէ լոտղներիս. բայց իրականութիւնը այն է որ ի սկզբանէ քրիստոնէական տարեգրութեան մեծ շփոթութիւնը և անտեղութիւնը ծագել են ամեն տեղ և նաև մեր ազգի մէջ լլ. Զատիկը տօնելու համար: Բաց ի Աղեքանա դրեան զպրոցէն ուրիշ տեղեր զարգացած չէր տոմարագիտութիւնը, անկից լուր կը տրուէր ամեն տարի թէ որ պէտք էր տօնել Զատիկը: Մեր ժամանակը տարերեր է հիներէն: Այժմու եկեղեցական զրոց նական կամ վերջն զետեղուած են երկար տարիներու աղիսակներ, ամիսներու և օրերու հաշիւով, որով հեշտ է կանուխիչն զիտենալ ոչ միայն Զատիկի օրը, այլ նաև միւս շարժական տօներուն, ուտեսուց և պահոց օրերուն ալ Այսկայն տոմարագիտութիւնն այս ցանք գիւղութիւն մատուցանելէ յետոյ, այնուհանդերձ մերթ ընդ մերթ ասպարէզ նետուեր է Անշարժ Զատիկի հարցը:

Պատշաճաւոր իշխանութեան և ուտես մասիրողաց լուրջ ուշադրութիւնն կեղունացած է հետեւեալ երկու հարցերի վրայ. ա. Բանաւոր է, օրինաւոր է այսպիսի մի շարժումն. բ. Եկեղեցին պիտի յանձն առնո՞ւ այս փոփոխութեամբ նոր դրութիւն մտցնելու եկեղեցական տոմարի մէջ: Այս

երկու հարցերի մասին թեր և դէմ ուղղութեամբ շատ յօդուոծներ զրուեցան պարբերական թերթերի մէջ: Պայքարողներու մի մասն՝ յարեալ հնաւանդ սովորութեան՝ հակառակ է նոր զրութեան, իսկ միւս դասն համակեր է Անշարժ Զատիկ հաստատելուն, բայց մի քանի պայմանաներով, որոց մեծը և զիսաւորն է որ լլ. Զատիկն անպատճառ կիրակի օր տօնուի ըստ սովորութեան:

Մինչ զանց ընելով յիշատակել հակառակորդաց կարծիքները որոնց յայսմ կը բովանդակուին թէ ինչ հարկ կայ փոխել հինոր, ցանի որ այսպէս ալ, թէ և շարժական, ատկայն եկեղեցական տարւոյ շրջանն զարերով միակերպ ընթացեր է... Մինչդեռ Անշարժ Զատիկի կուսակիցներն այսպէս կը տրամարաննեն: Ներկայ ժամանակիս Եկեղեցին Զատիկը կը տօնէ լուսնական տարւոյն հետեւով, այսինքն մարտի լուսնի ըրման յաջորդ կիրակին, և ասոր համար շարժական է: Խսկ քաղաքական իշխանութիւնն գործածում է արեւային զրութիւնն և տարին՝ որ 365 օր է:

Արդ Եկեղեցական տումարը այնուհանդերձ որ ըստ իւրց յարմարցուած է աշեւային տարւոյն, ատկայն ամենազիմաւոր տօնի համար լուսնի փուլերուն կը հետեւի. ահա մի հակառակութիւն, յօրում է և ինդորոյ կորիկն, Հին ազգեր բոլորն լուսնական տարի գործածեր են, որովհետեւ հաշիւներն դիւրաւ կը լինէին և տեսանելի են լուսնի կրած փոփոխութիւնը: Հրեայց բացառութիւն չէին կազմեր, մինչեւ որ Հոռվմայեցոց Յուլիոս կեսարու ժամանակ ընդունելի եղաւ արեւային 365 օրերու շրջանն, որ արդ եւս ի գործածութեան է, աննշան բարեփոխութեամբ:

Հրեայց հաւատարիմ մալով Մովսիսական օրինաց, իրենց Զատիկն տօնելու հրամայած նիստան ամսի մէջ, շարունակեցին գործածել լուսնական տարին. և Պատիկը տօնին եղաւ Քրիստոսի շարչարանին և Յարութիւնն:

Եկեղեցական պատմութեանին յայսնի է

որ Նախկին քրիստոնեայք առաջին և երս կրողդ դարուն, մասնաւորապէս նաեւ Աւրեամսեան Եկեղեցին, Հրէից հետ կը տօնէին Ա. Զատիկին, որովհետեւ հրէութենէ դարձած քրիստոնեայք ամեն տեղ զերակշռութիւն ունէին հեթանոսութենէ դարձածներու հանդէպ: Բայց շուտով հրէական սովորութիւնը պիտի տեղի տային հեթանոսութենէ դարձի եկող քրիստոնէից, այսինքն Անտիոքեան և Աղեքսանդրեան դպրոցներու ուղղութեան հետեւողներուն, որոնց հնագանաբար պիտի խորչէին Քրիստոսի խաչանուաց, Հրէից հետ ի միասին տօնելու իրենց Փրկութեան և Ազատութեան տօնը, Ա. Զատիկը: Նա մանաւանդ որ քրիստոնէից հալածանաց ժամանակ, Հրեայք այն խարդախ և դաւաճան զիրքը կը բռնէին, ինչ որ զժքաղդարար տեսանց մեր օրեր Հայոց նկատամամբ Համբական ջարդերու ժամանակ: Թէպէտ Փոքր Ասիոյ Աղեւելեան եկեղեցիներէն ումանց, յենլով իբր առաքելական աւանդութեանց վերայ, շարունակեցին հրէական սովորութիւնն զեռ մի քանի ժամանակ, սակայն Քրիստոնէութեան յաղթանակի առաջին տարիներից, Նիկոյ սուրբ Ժողովի մէջ ջնջուեցաւ հրէական աւանդութիւնն, և սահմանեցաւ համաձայնութեամբ կայսերական իշխանութեան և միարանութեամբ ամեն եպիսկոպոսաց տօնել Ա. Զատիկին մարտ ամսի լուսնի լրման յաջորդ կիրակին, և այսպէս շարունակւում է մինչեւ ի դարբ:

Յուլիսան առմարի գործածութիւնն կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ մնաց ի գործածութեան. սակայն ունէր իւր թերութիւնն, որով ամեն տարի քաղաքականն երթալով յետ կը մնար աստեղարշակական տարիէն, որով դարերի ընթացքում քաղաքական տարին տասն օր յետ մնացեր էր. այնպէս որ գարնան գիշերահաւասարն փոխանակ մարտ 21ին կը կանիքը 11ին սկսելու: Վաղուց սումարագէտներն անդրադարձեր էին այդ սիսլը, և զանազան փորձեր արին վերականգնելու ստոյգ թուականն, միայն Գրիգոր ԺԴ Պապին վերա-

պահուած էր տոմարի վերանորոգութեան փառը, իւր 24 փետրուարի 1582 տարւոյ «ի մէջ ծանրագոյն» հրատարակած կոնդակով: Գրիգորեան նոր ծոմարն իւրագական ազգերն միահամուռ ընդունեցին, ի բառ առեալ իրուսիայէն և իրեն հաւատակից փոքր ազգութիւններէն ումանց, և յետամաց ծանկաստանն:

Ծնորչիւ այս նոր տոմարական բարեփոխութեան արեւային և աստեղաբաշխական տարիներու մէջ հաստատուեցաւ հաւատարակըութիւն, որով ապագայի ուրիշ սիրաներու առջեւն եւս առնուեցաւ: Տարեկան երկուամ միջեւ եղած տարրերու թիւնն հազիւ 24° և 36° է, այսինքն մէկ օր կազմելու համար կարկառը է 3500 տարի: Գհաւատացողն կարող է սպասել!

Ուրեմն ներկայ հարցը ոչ այնչափ տոմարի ճշգութեան կամ սիսալներու շուրջն կը շրջի, որչափ անկախ լուսնական տարիէն, արեւային տարւոյ օրերէն մին, որ մօս լինի Քրիստոսի չարչարանաց օրերին, և լինի միանգամայն կիրակի, որոշել և սահմանել տօնելու Քրիստոսի Ա. Յարութիւնն որ պիտի կոչուի Անշարժ Զատիկ:

Վերեւ յիշեցինց որ այս մասին թերև և դէմ պայցբարողներ կան. սասցինց որ պահպանողականներու պնդումներն զուտ զգացղական են, զուրկ զիտական հրմունքից. պէտք է հին դրսւթիւնը պահել, ասում են որովհետեւ հին աւանդութիւններ զարերի ընթացքի հետ, նուիրական եղած են ամենըի համար: Միամիտ առարկութիւն, վասն զի մեր նախապատճիր գործածութիւնն կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ մնաց ի գործածութեան. սակայն ունէր իւր թերութիւնն, որով ամեն տարի քաղաքականն երթալով յետ մնար աստեղարշակական տարիէն, որով դարերի ընթացքում քաղաքական տարին տասն օր յետ մնացեր էր. այնպէս որ գարնան գիշերահաւասարն փոխանակ մարտ 21ին կը կանիքը 11ին սկսելու: Վաղուց սումարագէտներն անդրադարձեր էին այդ սիսլը, և զանազան փորձեր արին վերականգնելու ստոյգ թուականն, միայն Գրիգոր ԺԴ Պապին վերա-

կամ ազգային սովորութեան կամ սրբաւան աւանդութեան ոչինչ չնկատեցին մի միայն Անշարժ Զատկի հաստատութեան մէջ : Ամէն նորութիւն, թէ և անմեղ, ի սկզբան երկիւր և կասկած կը յարուցանէ, և ժամանակն է որ կ'արդարացնէ գործի պատշաճութիւն և օգտակարութիւնն, լուսնի շրջանն, որին կը հետեւի Եկեղեցին, իւր նախասարերային դրութեամբ, չի համապատասխաներ իրականութեան և տոմարագիտական արժէց չունի: Վասն զի այդ դրութեամբ Զատկի տօնը տարուէ տարի 25 աւոր միջոցի մէջ կը տատանի, որով ահազին տարբերութիւն կը պատճառէն նախ քաղաքական գործառնութեանց, դպրոցական հաստատութեանց ուսման կանոնաւոր ընթացքին, քննութեանց եւայլն երբ օրինակի համար մի տարի Մարտի 22ին և մի ուրիշ տարի Ապրիլի 25ին հանդիպի Զատիկն: ահա պատճառներ ուրոց առջեւ հակամէտ են տեղի տալու նաեւ ամենաջերմ պաշտպաններն հին տումարի շարունակութեան: Երկրորդ Զատկի ստումերուց իրար անցումն մը առաջ կու զայ ժամակարգութեան տօներուն և Ժաղաւարներուն, որոնք յետ ու յառաջ կը մղուին խմբովին կամ կիսամասնեաց վարդավառէն մինչեւ ի Վերափոխումն, կամ Յայսնութեան ութօրէքէն զկնի մինչեւ Առաջաւորաց բարեկենդան: Եւայլն: Յիրաւի մի քիչ տաղակալի է ամեն տարի նստել և հաշուել լուսնական փուկերն և կարգ մը ուրիշ տոմարական հաշիներ որոշելու համար այս ինչ տարւոյ Զատիկն: Մանաւանդ աւելի տաղակալի է (և ինծ բազմից հանդիպած է) երբ մի Ցէրտէր կամ Ցիրացու հարցապնդում են. Ո՞րն է զիր տարւոյն, քանի՞ն է Յօթներեակն, Վերադիրն, իննեւտաներեակն ևայլն: այդ բոլորն ծառայում է միայն մի տարւոյ Զատիկն, տօներն, միջոցներն զիտենալու համար: Մինչդեռ եթէ մի անգամ հաստատուի Անշարժ Զատիկն, այդ ամեն զիլացաւանքն կ'ազատին ժամասցն և ժամուռոն:

Անշարժ Զատիկ ոչ այլ ինչ կը նշա-

նակէ, բայց եթէ Եկեղեցական Ժարեգլուի: Եթէ քաղաքական Ժարեգլուին ըստ հին և ըստ նոր տոմարի ամենայն ազգց կը կատարեն Յունուարի մէկին, (որոնց երբեմն ունէին իրանց սեփական և ազգային Նաւասարդն) մի և նոյն պատճառաբանութեամբ, ընդհանրութեան համակերպութեան համար, կարելի է հաստատել Անշարժ Զատիկ, և կատարել ըստ հին և ըստ նոր տոմարի: Եւ որովհետեւ Քրիստոսի մահուան օրը ամենայն ճշութեամբ մեզի յայտնի չէ և եկեղեցական աւանդութիւնն լուսնական տարիով տօներ է ընդմէջ 22 Մարտի և 25 Ապրիլի, ապա ուրեմն եթէ այդ միջանկեալ կիրակիներից մին վճռուի իրրեւ Անշարժ Զատիկ, ոչ մի անտեղութիւն և ոչ մի յատուկ նորութիւն տեղի պիտի ունենայ: իսկ Փըրկագործութեան խորհուրդն չարչարանաց և Յարութեան յիշատակն հաւասար հանդիսաւորութեամբ պիտի կատարուին, առանց մի որ և է զայթակղութիւն պատճառելու հաւատացեալներին:

Բայց հրատարակել այսպիսի մի մեծ նորութիւն մեր ուժերից վեր էր, չնայած որ մենք երբ Տիգիսում 1897ին Միջին փողոցի Կաթոլիկաց Եկեղեցում պաշտօնավարում էինք իրրեւ ծխատէր Հայ կաթողիկէ համայնքն, այն ժամանակէն արդէն մտաց խորհրդանոցի մէջ ամփոփուելով ծրագրեցինք Անշարժ Զատիկի գաղափարն: Բայց երբ Պիոս Ժ Արքա ֆահանայացեան, Եկեղեցական բարեկարգութիւնց ծրագրի մէջ մտուցեր էր նաեւ Անշարժ Զատիկի հարցը (1 նոյ. 1911) Divino afflatu հրատարակած կոնդակով, հնարաւորութիւն տուաւ գիտնոց մասնագիտօքն ուսումնասիրելու այդ հարցը: Այս նպատակով եղած զանազան հրատարակութեանց միջն, Rassegna Gregoriana հանդիսի հիւրենակալած յօդուածի մի կտորն արտագրելով դրկեց մեզի հոգեկից եղբայրներէն մին, Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, Հոսմի Եկեղեցական կոնսերվատորի ուսանող, միանգամայն յորդորելով որ մենք ալ մեր կազմած ծրագիրն հրատարակենք: A.R.A.R. @

Թիշեալ Հանդէսն իւր Գևկատ. թ. (1911, էջ 435-438) այսպէս զրում է «.... Այս նպատակաւ հրավարակի վրայ զրուցաւ տարւոյ առաջին օրը կղզիացած և հանդիսաւոր տօնել, այնպէս որ ոչ մի շաբաթու և ոչ մի ամսի մէջ մտնէ. այլ պարզապէս լինի տարւոյ առաջին օրը : Որով տարին պիտի լինի 364 օր. նոյն պէս նահանջ տարւոյ աւելի մի օրն, նաևս պէտք է առանձին և հանդիսաւոր օր լինի զետեղելով Յուլիսի 31ի և Օգոստոս 1ի միջև : Այս տօնվ կը կարծուի թէ դիւրին պիտի լինի Եկեղեցւոյ համար հաստատել Անշարժ Զատիկը Ապրիլ ամսի առաջին կիրակիներից մէկը, որ հանդիպում է անփոփոխ կերպով ծին, 12ին, 19ին, Քրիստոսի Ս. Ծնունդն Դեկտ. 25ին միշտ չորեքշաբթի օր պիտի հանդիպի»....

Տեսնալով որ այս առաջարկն մեր ծրագրին կը մօտենայ, բայց շատ աւելի թերի և նուազ պայծառ և որոշ՝ Անշարժ Զատիկի նկատմամբ, մեր ծրագրին ալ զրկեցինք առ նոյն «Rassegna Gregoriana» զոր հիմայ հոս ստորեւ պիտի բացատրենք:

Մենք փոխանակ 365ի, բաժանեցինք տարւոյ օրերն 360ի, որով տարւոյ 12 ամիսներ 30 օր լինելով, հինգ օր աւելանում էր, և մնում էր դուրս տարիէն, ինչպէս հին ժամանակի ազգերէն ոմանք ունին 5 օր աւելիաց : Արդ փոփխական տոմարներու սխալներէն խուսափելու համար, այդ հինգ օրերուց չորսն բաժանեցինք իւրաքանչիւր եռամսէից վերայ, որով տարին կ'ունենայ 364 օր, և այս է իսկապէս հիմն Անշարժ Տոմարին :

Այն մի աւելի օրը, պէտք է ամսաթուէն դուրս մնայ, այսինքն ոչ մի շարուրու մէջ չմտնէ, հետեւապէս պէտք է զնել մի ամսի վերջը, բայց կղզիացած, առանձին, և պատճառը կը բացատրեմ թիշ յետոյ :

Գլխաւորապէս ուշ դարձուցինք, որպէս զի ըստ կարեւոյն Մեծ տօներն կիրակի օր ինկնան, ինչպէս ծրագրուած Պատկերը ցոյց է տալիս : Ասոր համար կամեցանք

Եկեղեցական և Քաղաքական տօների մեծագոյնը, նոր Տարին, անպատճառ կիրակի հանդիպի : Հետեւապէս Քրիստոսի Առուրդ նոնունդն Դեկտ. 25ին նոյն պէս կիրակի կը հանդիպի :

Յառաջ խաղալով Յունուարի 1էն, պահելով աչքը պատկերի վերայ, անցնելով Փետրուարն և Մարտն, անխախտ կերպով կիրակի կը հանդիպի Ապրիլի մէկն, որ է Երազկազարդի կիրակին, ուստի համապատասխան բարեփոխութեան նպատակին, այսպէս և միշտ Ապրիլի ութին պիտի հանդիպի անշարժ Ս. Զատիկի Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Ապրիլի մէկն կիրակի լինելով, անհրաժեշտորէն կիրակի հանդիպում է և 25 Մարտի, և Աւետման տօնը Ս. Խսուածածնինի՝ իւր աւանդական օրը կը տօնուի :

Պատկերի վրայից նկատելի է որ ամեն եռամին սկսում է այսպէս, առաջին ամիան կիրակէ, երկրորդն երեքշաբթի, երրորդն հինգշաբթի, այնպէս որ իւրաքանչիւր ամսի ամեն մի օր, ունի իւր համապատասխանը յաջորդ եռամսէի իւրաքանչիւր օրուան, այսպէս օրինակի համար, գիտենալով որ Յունուարի նն հինգշաբթի է, իսկոյն կարելի է սկսել որ հինգշաբթի է Ապրիլի նն, Յուլիսի մերերի նն և այսպէս նաև միւս ամիսներն : Իսկ այն 365երրորդ օրը, որ ասացի թէ կղզիացած պիտի մնայ, շաբթու օրերուց դուրս, կարելի է զնել ընդ մէջ Դեկտեմբերի 31ին (32^o) և Տարեգլխոյն, անուանելով Վերջինն «Novissimo» իր վերջացող տարւոյ (յիշատակին) նուիրուած : Նահանջ տարւոյ աւելի օրն կարելի է զետեղել ընդ մէջ 7 Ապրիլի (Աւագարաթ) և 8 ապրիլի, իրեւ օր Ս. Յարութեանը հանդիսաւորութեան նուիրուած, փոխանակ տօնելու 8 Ապրիլի, որ իրեւ սովորական կիրակի պիտի համարուի նահանջ տարիներու մէջ միայն¹:

Ահա համառոտակի բացատրուած մեր ծրագիրն, որ կարծենք աւելի պարզ և որոշ է քան որիշ շատերը :

Այսքանով յայտնի կ'երեւին այն տար-

բրութինք որ կ'անցնին մեր և Rassegna Gregorianaյի ծրագիրներու միջեւ, այսինքն նախ և առաջ մեր ծրագրով զգուշանում ենք բախելու հակառակաց զգացմանց, որ Յունուարի առաջին օրն մնայ դարձեալ նուիրուած նոր Ցարույն, ազատ օրը զետեղելով հոն՝ ուր աւելի յարմար և պատշաճ է իրեն, որով պիտի յիշենք ծերունի տարին, որ կ'երթայ թաղուելու յափտենական մոռացութեան վհի մէջ:

Երկրորդ, նահանջ տարւոյ աւելի օրուան զետեղելու հոգսէն դիւրաւ ազա-



տելու հնարքն է կոչել զնա, ինչպէս բնական կ'երեւի Օր Յարութեան:

Երրորդ, մինչդեռ ըստ ծրագրի Rassegna Gregorianaյի չի զիցուուիր ուր զետեղել Զատիկն, Ապրիլի Ծին, Թէ 15, թէ 19, որ չի համապատասխաներ Աշշարժ Զատիկի նապատակին, մեր ծրագրով ընդհակառակն Ս. Զատիկն կը տօնուի միշտ և անշարժ Ապրիլի 8ին կիրակին, եթէ անելուծ օրը ուզուի տարւոյ որ և է ամսոյ վերջն յաւելով, և ոչ թէ ընդ մէջ 7 և 8 Ապրիլի, ինչպէս վերեւ ասացինք:

Համառակուով զրածնիս, կը հետեւի.

ա. Հիմն անշարժ տարւոյն համարելի են 364 օր.

բ. Եռամսէից վերջինը փոխանակ 30ի պիտի ունենայ 31 օր.

գ. Ազատ մնացած օրը (365դ) եթէ յար-

մար չղատուի յաւելուկ Դեկտ. 31ի վերջիր 32դ օր, այլ յաւելուուի մի ուրիշ ամսու վրայ, սակայն պէտք է ի նկատի առնուու որ այդ օրը շարթու եօրը օրերուց դուրս պէտք է մնայ:

դ. Նահանջ տարւոյ ազատ օրեւ նոյնպէս պէտք չէ մտնի ո՛ր և է շարրու մէջ, այլ առանձին ինքն իրեն պիտի մնայ. որ Կարեիլ է սակայն զետեղել 30 օր ունեցող ամիսների մէկի վերջ, որ Պարապոյ. անուանելով, ինչպէս օրինակի համար Անգլայուում կան այսպէս կոչուած օրեր, կամ լաւագրին է յատուկ պատմական յիշատակի անուանով կնքել:

Հրատարակելով մեր ծրագիրն, յունանց «Բազմավիպի» ընթերցողներն ներուղամութեամբ վերաբերեն մեր զրածներուն, ընդունելով եղած առաջարկն ոչ իրեւ պատզամ, այլ իրեւ մի նորուրին²:

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

1. Այս երկու օրերու համար ահա ուրիշ կարեւի տրամադրութեաներ. 365դ օրը, որ պէտք է զարս թողուէր ամսն շաբաթ օրերուց, զայն զնել զետեղերի 31Ծ վերջ, ի յշառակ ինքն տարւոյն կատարածին, և կունել նախորդ կամ վեր իր 32դ որ զետեղերից: Խանջանջ տարւոյ աւելի օրը, զնել յունիսի 31Ծ յառաջ և կունել Զննիք կամ լաւ ևս Ուրաբիս: Եւ այս զրածնել առաջին զետեղին թանուար 30Ծ վերջ իր 31դ օր, և կունել Բարեկենամ, արձակուրող և հանգստան օր ամսն զրոցական Հաստատութեանց: Խակ միւս (նահանջ տարւոյ աւելի օրն) զնել Յուլիսի 30Ծ վերջ իր 31Ծ օր, և կունել Խակի Անուգ (Canicula), որ պարզաւաշութեան և սկզբն զրոցական ամառնային արձակութեան և հանգստան:

2. Վեր ծրագր տառին հրատարակեալ եղաւ Փլուրենակոյ «Unità Cattolica» լրագրու (15 Գետ. 1912) ասելու «ու զորի ի կարեւորութեան»: Ասելու նոյն արձակութեան ներկայութեան՝ Ակադեմիայի անդամութեան անդամակին, ի վերջոյ «Rassegna Gregoriana» Հանդեր Մենարդոյ Խմբագիրն, Mons. Respighi, Ceremoniere Pontificio և միանամայն Համապատասխան կարգադրութեան մերաւու զրածնեան, հրատարակելով նայուաթեամբ մեր ծրագրեւ, իր ընձառական պարբեր այսուք կը ներկայացնէք. «Յաջարութեամ կը զնելց Հ. Նահապետեանի յուղածեց, և չըն ցուուարի նախառական որ իր դրաման զրաւու բացարարութեան ալ տարեցոյց լրջանակի միջոցաւ շատ հանձարեղ է...»:

— —